ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 4825-Ա « 28 » նոյեմբերի 2025 թ.

Ն.ՉԱՐԲԱԽԻ 14-ՐԴ ՓՈՂՈՑԻ Հ.39 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՍԱՀՄԱՆՆԵՐԸ ՃՇՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Վարչական ակտի ընդունման համար հիմք է հանդիսացել Գարեգին Առաքելյանի լ/ա Մանուշակ Ավետյանի դիմումը՝ Ն.Չարբախի 14-րդ փողոցի հ.39 հասցեում գտնվող (տնամերձ) հողամասի սահմանները ճշտելու մասին:

Հարցի քննարկման համար հիմք են հանդիսացել «Հայաստանի ազգային արխիվ» ՊՈԱԿ-ի 2024 թվականի մարտի 27-ի հ.Հ-3134, 2025 թվականի հուլիսի 8-ի հ.Հ-6583 և սեպտեմբերի 22-ի հ.Հ-9537 գրությունները՝ կից փաստաթղթերով, հարևաններ՝ Գայանե Աբրահամյանի, Անդրանիկ Եսայանի, Ռուզաննա Հակոբյանի, Լուսինե Բարխուդարյանի և Լևոն Պողոսյանի հայտարարագրերը և կադաստի կոմիտեի ԱՏ-22102025-99-0261 տեղեկանքը:

Երևան քաղաքի ավագանու 2024 թվականի սեպտեմբերի 10-ի հ.204-Ն որոշմամբ հաստատված Երևան քաղաքի գլխավոր հատակագծում ամրագրված պայմանական նշանների համաձայն՝ քննարկվող հողամասը գտնվում է բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գոտում է, որի ծածկագիրն է՝ 01-011-0217-0018 (համաձայն՝ Հայաստանի Հանրապետության կառավարության.2009 թվականի դեկտմբերի 24-ի հ.1517-Ն որոշման):

Տեղագրական հանույթի ճշգրտումից պարզվել է, որ քննարկվող հասցեում գտնվող հողամասի մակերեսը՝ փաստացի չափագրությամբ կազմում է 360.0քմ (ըստ արխիվային տեղեկանքի՝ 0.036հա), որն ընդգրկված չէ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածի սահմանափակումների ցանկում, գտնվում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի հունիսի 4-ի հ.1023-Ն որոշմամբ հաստատված Երևան քաղաքի հողերի տարածագնահատման 10-րդ գոտում:

Ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 49-րդ հոդվածով, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 3-րդ, 53-րդ, 59-րդ և 60-րդ հոդվածներով, հողային օրենսգրքի 52-րդ և 59-րդ հոդվածներով, հաշվի առնելով Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության 23.06.2025թ. հ.Ն/33973-25 եզրակացությունը և 03.10.2025թ. հ.Դ-106639-25 գրությունը.

1. Սահմանել, որ Ն.Չարբախի 14-րդ փողոցի հ.39 հասցեում գտնվող (տնամերձ) 360.0քմ հողամասի սահմանները որոշվում են սահմանված կարգով հաստատված հատակագծով:

2.Սույն որոշումը ենթակա է պետական գրանցման՝ ՀՀ կադաստրի կոմիտեում:

3. Որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Երևանի քաղաքապետին կամ դատական կարգով Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

4. Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության, անշարժ գույքի կառավարման վարչությունների պետերի վրա:

5. Որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն ապահովում է Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարը:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ